Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
մայիսի 25-ի N 254 - Ա
որոշման

«ԱՐՁԱԳԱՆՔ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՆ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը | Արտակարգ արձագանք նոր կորոնավիրուսային վարակին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային Ֆեդերացիա |
| 4. | Ծրագրի կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 49,040,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ բնակչություն, ՀԿԽԸ կամավորներ, միայնակ տարեցներ և հաշմանդամություն ունեցող անձինք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.04.2020 թ – 31.05.2020 թ. |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սննդի փաթեթների և հիգիենիկ պարագաների ձեռք բերում և բաշխում՝ հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարա-րության կողմից հաստատված ցանկն ու տեխնիկական բնութագրերը, իրազեկման գործընթացներ՝ ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Նշված գործողություններն իրականացնելու համար պլանավորվում է ծախսել ընդհանուր առմամբ 49,040,000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՀՀ մարզերի միայնակ տարեցների և խոցելի խմբերի այլ ներկացուցիչների համար ձեռք բերել սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ, ախտահանիչ նյութեր և անհատական պաշտպանական միջոցներ (27,322,000 դրամ), բնակչության իրազեկմանն ուղղված ինֆորմացիոն նյութերի տպագրություն (8,980,000 դրամ), թվով 500 կամավորների, որոնք մասնակցելու են սննդի և հիգիենիկ փաթեթների բաշխման գործընթացին, ինչպես նաև բնակչության իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներին, խրախուսում երկու ամիսների ընթացքում (7,500,000 դրամ), տրանսպորտային ծախսեր (2,121,700 դրամ): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերչական ծախսերը, այդ թվում աշխատավարձ (684,000 դրամ), այլ չնախատեսված ծախսերը (2,432 300 դրամ), կազմում է 3,116,300 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՏԻՄ-երի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Աշխատանքների ընթացքը ենթարկվելու է մշտական հսկողության ՀԿԽԸ կողմից: |

| | | |
|---|---|---|
| | | ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ